ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ գնման պայմանագրում 2021 թվականի նոյեմբերի 19-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	Կանխավճարի տրամադրման պայմանների փոփոխություն
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ պայմանագրի 4.3 կետում կատարված փոփոխություն
Փոփոխության հիմնավորում	Պայմանագի 7.5 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
25.10.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ գնման պայմանագրի

ք. Երևան «19» 11 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ավագյանի (այսուհետ՝ Կատարող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 25.10.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 4.3 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<4.3 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը

4.3.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար, որը չի կարող ավել լինել տվյալ տարվա համար հատկացված գումարից:

4.3.2 Կատարողը կանխավճար ստանալու և դրա չափի վերաբերյալ գրությամբ դիմում է Պատվիրատուին:

4.3.3 Պատվիրատուն կանխավճարը հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

4.3.4 Կանխավճարի մարումն իրականացվում է ծառայության հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան, Բաղյան փող. 1-ին նրբ. 6/6
կառավարական տուն 3	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 163518011545
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00883641
Հ/Հ 900011027688	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Գ. Ավագյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.